

մեծազոյն Քահանայապետին, Ընդհանրա-  
կան, Առաքելական, Կաթողիկէ Եկեղեցւոյ  
Գերագոյն Պետին, Գլխաւոր Առաքեալներուն՝  
Պետրոսի եւ Պօղոսի՝ վեհազոյն Ս. Աթոռին  
արժանաւոր ժառանգին եւ Տեղապահին,  
Սրբազան Քահանայապետին...»: Եւ կը յա-  
րէ. «Թէպէտ ոմանք մեզ կը նախատեն եւ  
կ'ամբաստանեն Ձեր գերամեծար Սրբութեան  
առջեւ իբրեւ թէ բաժնուած եւ հեռացած ըլ-  
լանք Ձեր միութենէն, այդպիսիներուն եր-  
բեք մտիկ մի՛ ընէք, որովհետեւ մեր սէրը՝  
հաստատ, եւ մեր միութիւնը՝ անխախտ կայ  
ու կը մնայ» (32):

---

(32) Archivio S. C. P. F. Congressi Ar-  
meni, II, fol. 288.